ՉԳԻՏԷՔ, ԹԷ ՁԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՏԱՃԱՐ ԵՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՆՁԸ և ԱՇԽԱՏԱՆՔԸ

Բանալի խոսք.

(1 Կորնթացիս 6:15,19-20)

***15** Չգիտէ՞ք, թէ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են։*

***19** Չգիտէ՞ք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մէջ է, և որն ստացել էք Աստծուց. և դուք ձեր տէրը չէք, **20** քանզի մե՛ծ գնով գնուեցիք։*

Փառաւորեցէ՛ք Աստծուն ձեր մարմինների մէջ։

1. ՁԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԵՆ։

- *Աստված մեր Փրկիչը, իր քաղցրությունն ու մարդասիրությունը հայտնեց և փրկեց ոչ թե մեր կատարած արդար գործերի համար, այլ պարզապես իր ողորմած լինելու համար։* ***Նոր ծնունդ տվեց մեզ մկրտությամբ և Սուրբ Հոգու միջոցով վերանորոգեց մեզ (Տիտոս 3:3-4)։***
- *Գաղ. 3:27 - Վասնզի ամենքդ՝ որ Քրիստոսում մկրտուեցաք, Քրիստոսին հագած էք։*
- *Եփ. 5:26 - Որ նորան սրբացնէ՝ մաքրելով ջրի ավազանովը՝ խօսքի միջոցով.*

2. ՁԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՏԱՃԱՐ ԵՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ։

- *Ձեր ամեն բառ, ամեն միտք, եւ ամեն արարք իր առջև է և բաց։*
- *Նա քեզ լավ է ճանաչում։ Նա գիտի Քո ուժը և տկարությունը։*
- *Նա գիտի քո մեղավոր գործերը։*
- *Նա քեզանից ավելի լավ է քեզ Ճանաչում։*

Եփես. 1:13 - Նրանում, որ դուք էլ լսեցիք ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան Ավետարանը, որին հաւատալով ***կնքուեցիք*** *(sealed) խոստացուած Սուրբ Հոգով, 14 որ մեր ժառանգութեան գրաւն է մինչեւ ստացուացքի փրկությունը՝ ի գովութիւն նրա փառքի։*

2 Տիմ. 2:20-21 - Բայց մի մեծ ***տան մէջ*** *(Եկեղեցու մեջ) ոչ միայն* ***ոսկեղէն եւ արծաթեղէն (****հոգևոր)* ***անօթներ*** *կան. այլ* ***փայտէ եւ հողէ էլ****. - (մարդկային) կան որ պատիւի համար են, եւ կան որ անարգութեան համար են։ 21 Եթէ մէկը իր* ***անձը*** *մաքրէ այդպիսիներից, նա* ***պատուական անօթ*** *կ՚լինի՝ սրբուած եւ իր Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործերի համար պատրաստուած։*

3. ՓԱՌԱՒՈՐԵՑԷՔ ԱՍՏԾՈՒՆ ՁԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ (ՏԱՃԱՐԻ) ՄԷՋ:

- **Փառավորիր Աստծուն Հոգով և Ճշմարտությունով:**
- **Ի՞նչպես է սա հնարավոր**

  *Հռ. 12:1-2 - Արդ աղաչում եմ ձեզ, եղբարք, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները (**այսինքն տաճարը**) ներկայացնէք կենդանի, սուրբ եւ Աստուծոյ ընդունելի պատարագ, որ է ձեր **բանաւոր պաշտօնը**: 2 Եւ մի կերպարանուիք այս աշխարհքի կերպարանքով. այլ նորոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբ, որ դուք քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին եւ կատարեալը:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հանձնեք ձեր մարմինը Տիրոջը.
Փառաբանեք Աստծուն ձեր առօրյա կյանքում.